



ԲԱՐՈՑԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏՅՈՒՆԱԿԱՆ

ԺԵ. ՏԱՐԻ 1901

Տարեկան 10 ֆր. ոսկի — 4 ռս.:
 Անդրամասայ՝ 6 ֆր. ոսկի — 2 ռս. 50 կ.:
 Մեկ թիւ կարծե՛ 1 ֆր. — 50 կ.:

ԹԻՒ 5, 6
 ՄԱՅԻՍ, ՅՈՒՆԻՍ

ՈՐՄԱՐՆԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԿՐԱՄԱՐՆԱԿԱՆ ԵՒ ՀՈՍՈՐԵ

(K. Krumbacher, Kasia, Sitzungsberichte d. b. k. Akademie d. Wiss. 1897.)



ափա միանձնուհին ապ-
 րում էր Թագարում
 եւ մինն է այն սա-
 կաւածիկ կանան-
 ցից, որ սէր են ու-
 նեցել զբաղանու-
 թեան եւ պարա-
 պել: Նորա թողած
 աշխատութիւնները
 գլխաւորապէս հո-
 դեւոր բովանդակութիւն են. ունի նաեւ գրու-
 թիւններ աշխարհային քննադատութեամբ, բացա-
 րապէս Էդիկարտներ ծաղրագիրներ: Սոցանից մեկն
 ուղղուած է Հայոց դէմ որն եւ կազմում է մեր հե-
 տաքրբուրութեան առարկան: Առանձին բախտ է բա-
 նասերների համար երբ հրատարակութեան ձեռ-
 նամուխ ին լինում, այնպիսի հմուտ գիտնական-

ներ, որպիսին է Միւնխենի հռչակաւոր բիւզան-
 դագէտը: Ընդարձակ յառաջաբանում, Պր.
 Կրումպախերը պարզում է ոչ միայն Կասիայի, այլ
 ընդհանրապէս բիւզանդական շրջանում գրակա-
 նութեան մէջ յայտնի կանանց կեանքն եւ գոր-
 ծունէութիւնը: Այս գեղեցիկ նախաբանում մի
 քան մեզ տարօրինակ է թուում, եւ թող ների
 յարգը Պրոֆեսորը, եթէ կը յայտնէր մեր
 անհամաձայնութիւնն այս կէտում նորա հետ:
 Կրումպախերը կատարեալ հաւատ է ընծայում
 Կասիայի կեանքի վերաբերեալ առասպելական
 աւանդութեան: Յոյն ժամանակագիրները պատ-
 մում են, որ Միքայէլ կայսրի մահից յետոյ, նորա
 այրին, Եւփրոսինէ պետութեան ամէն կողմերից
 բերել է տալիս ամենագեղեցիկ աղջիկներ մայ-
 րաքաղաք, որպէս զի իւր որդին Թէոփիլոս ընտրի
 նոցանից իրեն ամուսին: Երբ ընտրուած աղջիկ-
 ները հաւաքուում են արքունիքում մարդաբ-
 անայ կողմած սրահը, կայսրուհին մեկնում է իւր
 որդուն մի ոսկէ խնձոր եւ պատուիրում ընծայել
 այն աղջկան, որ ամենից աւելի իրեն դուր կը գայ:
 Այդ քաջատաւոր էակների թուում քանուում էր,
 պատմագիրների ասելով, նաեւ մի հրաշագեղ
 աղջիկ. անունը Կասիա, ինքն ազնուական տոհմից,
 Թէոփիլոս զմայլած նորա քաջատալի գեղեցիկու-
 թեամբ, դառնում է կուսին այս խօսքերով.
 «արգարեւ, կնոջից է չարը ծագում» (ὡς ἄρα
 διὰ γυναικὸς ἐβρόνχ τὰ φαῖλα) Ամօթած կինը
 վրայ է բերում. աներկիւղ. «սակայն կնոջից
 բխում նաեւ բարին» . (ἀλλὰ καὶ διὰ γυναικὸς

πηγάδε τὰ χρεῖττονα) փետայի սիրտը կտրուում է այս հաստու պատառեանից, որ կուսական պարկեշտութեան ընդդէմ բան է համարուում եւ սպէ խնձորը տալիս է թեոդորոս Պափլագոնեացուն: Գեղանի կասեան բախտի այս չար խաղից յետոյ. վշտով մեկուսանում է աշխարհից, հիմնում է մենաստան եւ իրեն նուիրում աստուածապաշտութեան եւ գրականութեան:

Այս զրոյցի պատմական ստուգութիւնը Պր. Արուսեայի հասկանքն է համարում: Բայց խելք կտրելու բան է, որ բիւզանդական հօր ինքնաբան ամուսնանալու համար գիմեր մի այնպիսի միջոցի, որ վայել է միայն "հաղար ու մի գիշեր"ի մտացածին հերոսներին Պր. Արուսեայի երբեք յիշում է այս առթիւ թեոդորոս Ա. ինքը Եւգրիպի խնդրի պատմութիւնը. բայց այս դեռեւս ոչինչ չէ ապացուցանում, որովհետեւ տակաւին մեծ խնդիր է, թէ նոյն իսկ Եւգրիպի զրոյցն ինքան պատմական է: Աւետահայն ժամանակագիրը, որ հարորդում է մի կասեայի աւանդութիւնը, Սիմէոն մագիստրոսն է Ժ. դարի վերջերում սորանից են փոխ առնում միւս պատմագիրները: Թեոփիլոս դահարձարացու 830 թ. ուրեմն կասեայի կենքն անցել է Թ. դարի առաջին կեսում: Այսպիսի մի ընդարձակ ժամանակում, հարգու երեւակայութիւնը կարոտ էր շատ բան ստեղծել բացատրելու համար, թէ ինչից ստեղծուած մի շնորհալի կին հրաժարուում է աշխարհից եւ փախում վանքում:

Կասեային վերագրած սուր պատասխանը, որի շնորհիւ զգուում է գահից, արդէն ցոյց է տալիս, որ այս հեքեմաթ յերիւրուած է որպիսի ժամանակ, երբ նորա գրական աշխատութիւններն եւ կեռ ծաղրագիրները հուշակ էին ստացին: Տարակուսելի է նոյն իսկ, որ կասեայ վանք մտած լինի երեսասարգ հասակում: Մի կին, որ մատաղ հասակում, զեռ կենքի չարն ու բարին չճշակած հեռանում է աշխարհից, չէր կարող այն փորձառութիւնն ունենալ, որ անհրաժեշտ է ծաղրագիրներ գրելու համար: Բաւական չէ մի միջոց տեսական ծանօթութիւն կշտամբելու այն միջութիւններն, որոնք նիւթ են միանձնուհու պարսաւական գրութեանց: Նոյն իսկ Պր. Արուսեայի խոստովանում է, որ կասեայի ծաղրագիրները կենսական հարուստ փորձառութեան արդիւնք են. (... ist offenbar die Frucht einer reichen Lebenserfahrung.) Եթէ նա 20 տարեկան կուսական է ապաստանել, երբ կարող էր ձեռք բերել կենքի փորձառութիւնը:

Անշուշտ նա արդիւն է մենաստանի պատեհից դուրս առելի քան 20 տ. եւ կրել աշխարհային ցուեք եւ հոգսեր, ակնաստեղծ շատ մոլութեանց: Այս պատճառաւ, կարծում ենք, որ յիշած միջոցէկը պատմական հիմք չունի եւ հնարուած է ուշ ժամանակ մի հաղուագիւտ եւ ընդունակ գրող-կնոջ յիշատակը զարգարելու համար:

Կասեայի մասին խօսելու առիթն իսկապէս այն ծաղրագիր է, որ ուղղուած է մեզ Հայերիս: Ահա յուսմանքն ընագիրն եւ հայերեն թարգմանութիւնը՝

Vers 33—42.

Τῶν Ἀρμενίων τὸ θεϊνότερον γένος
ὕπουλόν ἐστι καὶ φαυλῶδες εἰς ἄγαν,
μανιῶδες τε καὶ τρεπτόν καὶ βασκαῖον,
πεφροσιμμένον πᾶμπλειστα καὶ δόλον πλῆρες.
εἰπέ τις σοφὸς περὶ τούτων εἰκότως·
Ἀρμένιοι φαῖλοι μὲν, π'ὺν ἀδοξῶσι,
φαυλότεροι δὲ γίνονται δοξασθέντες
πλουτήσαντες δὲ φαυλότατοι καθόλου
ὑπερπλουτισθέντες (δὲ) καὶ τιμῆθ' ἄντες
φαυλεπιφαυλότατοι δεῖκνυνται πᾶσι.

Հայոց զարհուրելի ազգը

պատրի է եւ չարաբար զերին աստիճանի.

ալ եւ խելացնոր, փոփոխամիտ եւ նախանձոտ,
խիստ փրուած եւ լի նենգութեամբ:

Հատուցն է ասել սոցա համար մի իմաստասեր թէ՛

"Հայերը չար են, քանի որ հուշակ չունին,

Աւելի չար են դառնում, երբ մեծութեան են հասնում.

հարստանալու, հիմնովին չար,

իսկ երբ եւ մեծ հարստութիւն եւ պատիւներ
են ձեռք բերում

չարերից ամենաչար են հանդիսանում:

Միանձնուհու կարծիքը Հայոց մասին նպատաւորութիւնը չէ եւ լեզուն խայժող: Ար. Յոյներն ասում էին Հայերին, ինչպէս եւ միւս մանր ազգութիւններին, փաստ է նոյնքան ճշմարիտ որքան եւ այն, որ սոքա եւս իրենց կողմից առանձին համակրութիւն չունէին դէպ ի Յոյները: Մինչեւ այժմ էլ արեւելքում "բիր-ղէն" բառը, որպիսի անուշով Յոյներն այժմ յայտնի են փոքր Ասիայում, վերաւորական իմաստ ունին, համազօր, եթէ ոչ աւելի ուժեղ "ըհուս" գաղափարին: Ատելութեան պատճառն իրականում Հայոց յաղթանակող միջոցութիւնն էր Յոյներին հետ քաղաքական եւ տնտեսական կեանքում: Բայց Պր. Արուսեայի, առեմբար այս պատմական իրողութեան, հակամեւ է նաեւ կապածելու Հայոց բարբի մաքրութիւնը կշիռ

տալով մի « քիտակ », ուղեւորի վկայութեան։ Սակայն, ծաղրագրի նկատմամբ մեզ աւելի շահաւետ եւ կարեւոր կը լինէր, որոշել նախ նորա քրական արժեքը։ Կասեան իւր կարծիքը հիմնելու եւ հաստատելու համար, ինչպէս տեսնում է ընթերցողը, մէջ է բերում մի ոմն իմաստասերի խօսքերը։ Փիլիսոփայի անունը մեզ չի տալիս. հրատարակիչն եւս չէ փորձել արնադրելու նորա անձնաւորութիւնը։ Այդ իմաստասերն ու պլ ղը է, եթէ ոչ յոյն ժողովրդականոյցը որից մի քանի ծաղրագրի է հասել մեզ. նոցա թուում եւ հետեւեալը նուիրած կապպադովկացիներին։

„Καππαδόκοι φαῦλοι μὲν αἰεὶ, ζῶντες δὲ τομίντες

φαυλότατοι, κέρδους δ' εἵνεκα φαυλότατοι.

„Πη δ' ἄρα δις καὶ τρις μεγάλως θράζονται ἀήνηες,

[δὴ ῥα τοτ' εἰς ὥρας] φαυλεπίφαυλότατοι.

Μη, λίτομαί, βασιλεῦ, μὴ τέτρακις, ὄφρα μὴ αὐτὸς

κόσμος ὀλισσῇ καππαδοκίζόμενος.“

Epigr. Anthol. Palatina XI, 328 vol. II, 325.

Կապպադովկացիք միշտ չար են. փառքի հասնելու

աւելի չար, հարստութեան համար ամէնից չար իսկ եթէ երկու կամ երեք անգամ աւելի մեծ աստիճաններին են արժանանում,

[այն ժամանակ, անշուշտ, ընդ միշտ] չարերից ամենաչար.

Օ, աղերսում եմ, թագաւոր — ոչ չորս անգամ — ապա թէ ոչ

ինքն աշխարհը կը փրանայ կապպադովկիանաւով. [= կապպադովկական մոլութեանց եմթարկուելով]

Յովհաննէս Լիւդատ խօսելով Յուստինիանոսի նշանաւոր գործակիցներին մէկի, վատարախտ Յովհաննէս կապպադովկացու մասին, յիշում է այս ծաղրագրի, առանց հեղինակի անուն յիշատակութեան։ (Joann. Lydas. de Magistratibus ed. Bonn. p. 250.) Գրեւե նաեւ Կոստանտին ծիրանածին. de Tematibus ed. Bonn. III, p. 21. Կապպադովկացիներն ընդհանրապէս շատ տխուր հուշակ ունէին Յոյների մօտ։ Կոյն ժողովրդական իմաստասերին է պատկանում եւ մի ուրիշ ծաղրագրի նոյնպէս կապպադովկացիներին վերայ՝

„Καππαδόκην ποτ' ἔκιδνα καχὴ δάχεν ἀλλὰ καὶ αὐτὴ κάτθανε, γευσασμένη αἵματος ἰοβόλου. Anthol. Pol. II, 325.

(Կապպադովկացուն միանգամ մի վատ օձ խայթեց, բայց ինքն օձը ստակեց ճաշակելով թուռնալից արեւն.) Յայտնի է նմանապէս բիւզանդական սուր առածը. „τρία χάκισα, Καππαδοκία, Κρήτη καὶ Κιλικία.“ (երեք կապպան(կէն) են ամենավատթար — կապպադովկիա, Կրետէ եւ Կիլիկիա.)

Այսպէս ժողովրդական իմաստասերի խօսքերը, որ ուղղուած են կապպադովկացիներին դէմ, կասեան ինչ ինչ փոփոխութեամբ վերագրում է Հայերին։ Պէտք է ենթադրել այստեղ մի շարամուտ թիւն բարեպաշտ կոյսի կողմից։ Աւելի հաւանական է կարծել, որ Կասիայի ժամանակ կապպադովկացի ասելով, հասկանում էին Հայերին գլխաւորապէս։ Արիարածների երկիրը, իբրեւ ազգագրական գաղափար, վաղուց չքացել էր իրականութիւնից։ Կապպադովկիա աւելի աշխարհագրական անուն էր, որ մեծ մասամբ գրաւել էին Հայերն իրենց յառաջխաղացութեամբ դէպ արեւմուտք. մանաւանդ Արշակունեաց անկումից յետոյ։ Եթէ ճիշդ է, որ հին ժամանակ Հայաստանի արեւմտեան սահմանները Կապպադովկիայի աղբեղութեան տակ էին, անուրանալի է նաեւ, որ վերջերս, Յուստինիանոսի ժամանակից եւ նորանից յառաջ, կապպադովկիայի մի մասը նոյն իսկ պաշտօնապէս Եւրոքիդ Հայրի մէջ էր մտնում իւր ժամանակ, այսինքն թ. դարում։ Կասեանի նկատելու ենեալով Հայոց զօրութիւնն այս երկիրներում, կարող էր թիւրիմացութեամբ կարծել, որ ժողովրդականոյց փիլիսոփան եւս կապպադովկացի ասելով Հայ է հասկանում։ Այսպէս եղել է, ինչպէս մենք ենք ըմբռնում. թէ հենց չար դիտաւորութեամբ միանձնուհին կամեցել է փաթթել Հայոց վզին այն ինչ որ ուրիշից հասցէին է ստաց — սորանով — հարկու չէ թէ թիւեւանում նորա ծանր կարծիքը Հայոց մասին։ Այս կարծիքը Կասիայի անհատական հայեացք չէ. որն, եթէ հաւատարմք, որ 21 տարեկանից վաղք է մտել, թերեւս օչ մի Հայի չի տեսել օտարած ալդ մոլութիւններով։ Այս մի ընդհանուր հայեացք է, որ ունէին բիւզանդական Յոյները Հայոց վերաբերմամբ. ներշնչուած այն շարաինգրութեամբ եւ նախանձով, որով նորա նայում էին Հայերի փայլուն յաջողութեան հասարակական եւ քաղաքական կեանքի ամեն ասպարէզներում։ Սրամիտ ծաղրագրիչը իւր նշանաւորութիւնը չէր ունենայ, եթէ նկատուի միմայն իբրեւ պտուղ այն տափակ եւ անոյց տառիւթեան, որ սովորական երեւոյթ է միմայն կից քնակութիւն ունեցող ազգութիւն-

ների մէջ. եւ որն հետաքրքրութիւն կարող է ունենալ ոչ պատմական, այլ աւելի անտարա- նակաւ [Pathologisches Interesse] տեսականից, ինչպէս ասում է Հ. Գէյցերը, որն այդ կերպ էլ նայում ծաղրագրի վերայ՝ Ն. ԱՌՈՑ

Գ Ա Յ Մ Ա Կ Ա Ն

ԵՂԻՄԵՐԵԹՈՒԳՈՒՍԱՅ ԵՂԳՈՅԻՆՔ ՊԳՆՆԵ-
ՋՈՒՅԵՆՈՐ ԱՐՏՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿՐԵՂՈՒՆԻՆ
(Հարստեման-իւն)

Գործակատարին՝ նոր արտօնագրութեան նկատմամբ գրած վերոյիշեալ տեղեկութիւն- ներուն եղիտարեթուպոլոյ քաղաքաբաշխու- թիւնը շատ չուրախացաւ: — Ինքը ալ անոնց մէջ բաղձացած խնդիրներուն վրայօք շատ յու- սալից բաներ չկային: Բայց ճար չկար. քաղաքն աւելի բան չէր կրնար ընել: Յոյսը՝ Ազարեանին ու կայսեր գրած թուղթերուն վրայ դրաւ: Սա- կայն խաբուեցաւ:

Որչափոր եղածներէն կրնանք հետեւցընել, գործակատարն ազգային խնդիրներուն վրայ դեռ ըստ բաւականի տեղեակ չէր: Անոր հա- մար քաղաքաբաշխութիւնը կարեւոր համարե- ցաւ իրեն մանրամասն տեղեկութիւններ տալ ինչպէսնոց վիճակին ու խնդիրներուն վրայ: Չե- ունընիս եղած թղթի մը պէտք էնք ենթադրել, որ իրեն՝ ընդարձակ տեղեկութիւններով նա- մակ մը գրուած պէտք է որ ըլլայ քաղաքա- բաշխութեան կողմանէ, եղիտարեթուպոլոյ խնդիրներն ուսումնասիրելու եւ անոնց որպի- սութեանը վրայ մանրամասն տեղեկութիւն հա- ղորդելու համար: Ափսոս որ այս տեղեկութիւն- ներով նամակը չկայ: Բայց կայ այն նամակն՝ որուն մէջ կը ծանուցանէ քաղաքապետը, թէ կայսեր աղաչանաց թղթին հետ, կը խրէ իրեն տեղե- կութեանց թուղթ մը: — Այս նամակէն կ'ի- մանանք նաեւ, որ քաղաքն որոշած է իւր աշ- խատութեանցը համար 50 ֆիորին մըն ալ տալու, սովորական վարձքէն զատ, զոր կ'ըն- դունի Վիեննայի ազգային Ստեփան Մետիաշցի վաճառականէն:

Աւանց թուականի նամակը հետեւեալն է:
“Մեծարար Տէր.

“1791ին Աւագածողովին, մեր այգրէ- նածնութեան նկատմամբ բերուած ու Նորին

Վեհափառութիւնէն պթածաբար հաստատուած
կէ. յօդուածին համեմատ հասարակաց ծան- րաբեռնութիւնները — զինուոր պահելն եւ նախամիջի ծառայութիւն ընելը — քաղքին հասարակութիւնն ուրիշ ազատ թագաւորական քաղաքաց պէս գործադրելու յանձն առաւ: Բայց յսուցնուան աղաչանքէն — որուն մէջ զանոնք ստակով փրկանաւորել կ'ուզէր — հրաժարելով՝ հիմայ ի բնականն կ'ուզէ զա- նոնք կրել: Եւ որովհետեւ վերը յիշուած օրի- նաց յօդուածին համեմատ, Նորին Վեհա- փառութեան թղթիւնէն՝ մեր քաղքին համար ուրիշ — մեր երկրին օրինացը հետ համա- ձայնող — նոր արտօնութեան թուղթ մ'ըն- ղունելու կը սպասենք, ուստի ասոր նկատմամբ, մեր շինած աղաչանքին քով կը ներփակենք Հրամանոցը, ազգային խնդրոյն որպիսութեան ու ներկայ վիճակին վրայօք համառօտ գրու- թիւն մը, աղաչելով՝ որ մեծարգութիւնդ ասէ՛ տեսնելով եւ աւելի եւս ճանշնալով մեր հա- սարակութեան հիմնական դիրքն ու յարա- բերութիւնները՝ բարեհաճէք յիշուած նոր ար- տօնութեան թղթին նկատմամբ գրած աղա- չանքնիս, Նորին Վեհափառութեանն առջեւ դնելու — եւ յիշեալ թղթին իրապէս ար- քունի գիւնաստուն մատուցանելուն վկայու- թիւնն առնելով՝ ապահովագրութեամբ (Rece- pisse) զանկա մզի խրելու: Որպէս զի թէ ի գիպուածն Վիեննայի ու Վարզերն ասոր վրայ խօսք բանան մենք զմեզ կարենանք հարաւա- տագործել:

“Ասոր նկատմամբ ըրած աղաչանքս նո- րոգելով՝ կը ծանուցանեմ որ մեր հասարակու- թիւնը՝ Հրամանոցը, այս առթիւ, Չեր աշխա- տութեանը համար սովորեալ վարձքէն զատ 50 ֆիորին շնորհէք: Որ գումարին, քաղաքային ատենաբանը, հոն տեղի վաճառական Ստեփ. Մետիաշցիի ձեռք Չեզի յանձնելու նկատմամբ կարգադրութիւնն ըրած է: — Հրամանոցը պա- տասխանին պայանելով՝ կը յայտնեմ թէ եմ, պարտաւոր ծառայ:

Սարգիստի Լիւկիւսի
գլխավոր գաւառաւոր:

Ասոր վրայ քաղաքաբաշխութիւնը ծա- նուցանելէն ետեւ, որ իւր փափաքանացը հա- մեմատ, թէ Իւքնակալին ու թէ Ազարեանին աղերսանաց թղթերը գրած է, կ'աւելցընէ թէ, որովհետեւ, արքունի երկիր բառին նկատմամբ եղած որոշումն ամենեւին տեղ մը չի կրնար

• Berliner Philol. Wochenschrift 1899, p. 331.